ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1594-Ա « 28 » ապրիլի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի
Հ.4395-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

1.Երևանի քաղաքապետի 2024 թվականի նոյեմբերի 13-ի «Գնումների գործընթացի կազմակերպման շրջանակներում պատասխանատու ստորաբաժանում սահմանելու մասին» հ.4395-Ա որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. «Երևանի էներգաարդյունավետության երկրորդ փուլ» ծրագրում (Ծրագիր) ընդգրկված հանրային շենքերի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքների, սեյսմիկ ուսումնասիրության, չափագրման ծառայությունների, ինչպես նաև Ծրագրում ընդգրկված վերելակների նախագծերի տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացման ծառայությունների նպատակով «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ «ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ) սահմանել որպես պատասխանատու ստորաբաժանում՝ հետևյալ կազմով.

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝

Մերի Հարությունյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ

Պատասխանատու ստորաբաժանման անդամներ՝

Մերի Հայրապետյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի էներգաարդյունավետությանը միտված ծրագրերի իրականացման խմբի ղեկավար
Աննա Օհանյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի էներգաարդյունավետությանը միտված ծրագրերի իրականացման խմբի ֆինանսական մասնագետ
Արման Փանոսյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի գնումների մասնագիտական խմբի գնումների մասնագետ
Գևորգ Խրիմյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի համայնքային ծրագրերի իրականացման խմբի ճարտարագետ

Կարեն Ղալթախչյան «ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի իրավաբանական հարցերի մասնագիտական խմբի իրավաբան

»:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել «ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի տնօրենին:

3.Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ